ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա

Թեմա՝ Այրարատյան և Բարձր Հայքի տարազախմբերը

Հետազոտող՝ Լիլիթ Մեժլումյան

Ղեկավար՝ Լիլիթ Իսկոյան (մանկ. գ. թ. դոցենտ)

Երևան 2022

ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

ԹԵՄԱՆ՝ Դիմանկար, ինքնանկար, էսքիզ, կոմիքս

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

- Ծանոթացնել կերպարվեստի ստեղծագործությունը կարդալու, վերլուծելու հնարներին։
- Ամրապնդել՝ թղթի կենտրոն, թղթի եզրեր հասկացությունները։

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- Կրթական

Դիմանկարի, ինքնանկարի, էսքիզի, կոմիքսի առանձնահատկությունները

Վերլուծել կերպարվեստի ստեղծագործությունը։

- Զարգացնող

Վերլուծել աշխատանքները, արտահայտել սեփական կարծիք։

Ուսումնասիրել գծային և գունային առանձնահատկությունները։

- Դաստիարակչական

Ներկայացնել հայտնի ստեղծագործողների պատկերած դիմանկարները և ինքնանկարները։

Ուսումնասիրել հայ նկարիչների ստեղծագործությունները, դրանց գունային և կառուցվածքային առանձնահատկությունները։

- Հոգեբանական

Ճանաչողական գործունեությունը զարգացնող վարժության միջոցով զարգացնել դիտողականությունը, հիշողությունը, հաղորդակցման հմտությունը

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝

- Ըստ առարկայական չափորոշչի
- Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու
- համար /2D, 3D/:
- Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին:
- Ստեղծել իրատեսական արվեստի աշխատանքներ:
- Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ:
- 2D և 3D երևակայական աշխատանքներ:
- Վերլուծել իր և ընկերների աշխատանքները բոլոր մանրամասներով:
- Ցույց տալ աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը:
- Ներկայացնել արվեստի ստեղծագործությունների նշանակությունը պատմության
- տեսանկյունից:
- Ներկայացնել արվեստի դերը առօրյայում:
- Ըստ Հանրակրթության պետական չափորոշիչ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝

ՈՒսուցչի համար՝ դիմանկարի, ինքնանկարի, էսքիզի, կոմիքսի վերատպություններ:

Աշակերտների համար՝ գուաշ, սև գրաֆիտե մատիտներ, տուշ, վրձիններ, վատմանի թղթեր:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ՝ Զրույց կերպարվեստի տեսակների, դիմանկարի, ինքնանկարի, էսքիզի, կոմիքսի մասին:

Ստեղծագործությունների վերլուծություն և քննարկում աշակերտների հետ: Ինչպիսի տպավորություն է թողնում ստեղծագործությունը, ինչ զգացում է առաջացնում այն:

Դիմանկարը գեղանկարում, գրաֆիկայում և լուսանկարչության մեջ կոնկրետ մարդու կամ մարդկանց խմբի պատկերն է։

Երեխաների խմբից ընտրել 2 երեխա, մյուսները հանդիսատես են: Ընտրվածներից մեկը հանդես է գալիս, որպես նկարիչ, մյուսը՝ պատվիրատու, որի դիմանկարը պետք է նկարի նկարիչը: Նկարիչն ուշադիր նայում է իր պատվիրատուին 1-1,5 րոպե: Հետո նա շրջվում է փորձում է հնարավորինս մանրամասն նկարագրել առաջին երեխայի արտաքինը: Պատահականության սկզբունքով անընդհատ զույգերին փոխելով երեխաները հոգեբանական խաղի միջոցով նկարում են մեկը մյուսի դիմանկարը: Վարժությունը կօգնի երեխաներին կենտրոնանալ իրենց ընկերների դրական առանձնահատկությունների վրա:

Դասի ավարտին կարելի է միասին դիտել և քննարկել աշխատանքները: Լավագույն աշխատանքներով կազմակերպել ցուցահանդես:

ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

ԹԵՄԱՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԹՌՉՆԱԳՐԵՐ

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝ Զգալ բնության և կերպարվեստի ստեղծագործության տրամադրությունը: Դաստիարակել սեր հայկական մշակույթի հանդեպ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝

ՈՒսուցչի համար՝ մանրանկարի, հայկական թռչնագրերի վերատպություններ, օրինակներ հագուստին, շարֆին կամ պայուսակին նկարված:

Աշակերտների համար՝ սև գրաֆիտե մատիտներ, վրձիններ, վատմանի թղթեր, կտորներ, հագուստի վրա նկարելու նյութեր:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ՝ Զրույց (15-20 րոպե), երեխաներին ծանոթացնել հայկական մշակույթին, հայկական թռչնագրերին։ Հայկական զարդագրերի ուսումնասիրությամբ զբաղվել են Գ. Հովսեփյանը, Գ. Լևոնյանը, Մ. Մաքսուդյանը, Ս. Տեր–Ներսեսյանը, Ա. Մնացականյանը, Օ. Ա վետիսյանը, Տ. Իզմայլովան և ուրիշներ։ Մեսրոպյան տառերի ինքնուրույն ձևերը ներշնչել են միջնադարյան նկարիչներին՝ հորինելու այլ ժողովուրդների տառերի ձևավորումներից խիստ տարբեր զարդագրեր։ Զարդատառերը, ձևավորման եղանակից ելնելով, բաժանվում են մի քանի տեսակների:

Աշակերտներին սովորեցնել ինչին ուշադրություն դարձնել կտորի ներկերով աշխատելիս։ Նրանք իրենց անվանատառով էսքիզներ են անելու և նկարազարդեն շարֆ, հագուստ կամ պայուսակ:

Աշխատանքի կատարման ժամանակ ընթացքում հետևել դասի ուսումնադատիարակչական խնդիրների լուծմանը։ Ցանկության դեպքում երեխաները կարող են կազմակերպել ցուցադրություն իրենց աշխատանքներով: